ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
YEREVAN BRUSOV STATE UNIVERSITY
OF LANGUAGES AND SOCIAL SCIENCES

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ НАУК
ИМ. В. Я. БРЮСОВА

0002, Երևան, Թումանյան փող. 42
0002, 42 Tumanyan St., Yerevan
0002, Туманяна 42, Ереван

Հեռ./Tel./Тел. (374 11) 300-150
Էլ. հասցե/E-mail/Эл.почта: info@brusov.am
http://www.brusov.am

N 01-20/37
<20> 01 2020 թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան 14.01.2020 թվականի թիվ 344-25 տեղեկատվություն ստանալու հարցմանը՝ մեկ անգամ ևս հայտնում ենք (Ձեզ պատասխանվել է 18.11.2019 թ. N 01-20/985 գրությամբ), որ «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (ԵՊԼՀ) «Կոնֆուցիուսի ինստիտուտ»-ի (ԿԻ) տնօրեն Գոռ Սարգսյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը առ այն, որ նա չի ստացել իր կողմից պահանջվող տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

Ձեր հարցադրման 1-ին կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «Կոնֆուցիուսի ինստիտուտ»-ի հայկական կողմի տնօրեն Գոռ Սարգսյանի 2019 թվականի օգոստոսի 5-ի զեկուցագիրը շուրջ 3 ամիս շարունակ անպատասխան չի մնացել, այլ դրան տրվել է պատասխան և կից ներկայացվել ԵՊԼՀ-ի «Այ Դի» բանկի 11815000773001 հաշվեհամարից 4.603.595 ՀՀ դրամ փոխանցման մասին պարզաբանումներ: ԿԻ-ի տնօրեն Գոռ Սարգսյանին բազմիցս տրվել է տեղեկատվություն, որ ԿԻ-ի առանձնացված հաշիվ է հանդիսանում միայն դոլարային հաշիվը, իսկ ԵՊԼՀ-ի դրամային հաշիվի միջոցով կատարվում են ոչ միայն ԿԻ-ի բանկային գործարքները, այլ նաև ԵՊԼՀ-ի տարբեր բանկային գործարքներ: ԿԻ տնօրենի 05.08.2019 թվականի զեկուցագրին տրվել է մանրամասն տեղեկատվություն 4.603.595 ՀՀ դրամ գումարի մասին՝ գումարի բացվածքը excel ֆորմատով:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաշվապահական հաշվառման փաստաթղթերը հանդիսանում են առևտրային գաղտնիք և դրանք չեն կարող տրամադրվել: Միաժամանակ հայտնում ենք, որ Գոռ Սարգսյանը ԿԻ-ի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն և փաստաթղթերի պատճեներ կարող է ստանալ ԵՊԼՀ ֆինանսական վարչությունից:

Հարգանքով՝

ԵՊԼՀ ռեկտոր՝ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ